

Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի 2017 թ. դպրոցական օլիմպիադայի
հանրապետական փուլի
(տևողությունը՝ 150 րոպե)

11- 12 – րդ դասարաններ

1. ԼՂՀ – ի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ-----1.5 միավոր
 1. ՀՀ - ի հետ կապող գլխավոր ճանապարհն անցնում է Օմարի լեռնանցքով:
 2. Համախառն արտադրանքի ծավալով արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
 3. Մեկ շնչին բաժին ընկնող վարելահողերի մակերեսը մի քանի անգամ գերազանցում է ՀՀ համապատասխան ցուցանիշը:
 4. Ջրաէներգետիկան ամբողջովին բավարարում է հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկը:
 1. Հյուսիսում, զուգահեռականի ուղղությամբ, ձգվում է Մոսվի լեռնաշղթան:
 2. Բոլոր գետերը պատկանում են Կուրի և Արաքսի ավազաններին:
2. Համաշխարհային տնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ-----1.5 միավոր
 1. Համաշխարհային տնտեսության ձևավորման երեք հիմնական նախադրյալներն են՝ համաշխարհային տրանսպորտը, բնական ռեսուրսները և համաշխարհային շուկան:
 2. Համաշխարհային տնտեսությունը հաջորդաբար անցել է զարգացման ագրարային, արտադրական և արդյունաբերական փուլերը:
 3. Աշխատանքի աշխարհագրական միջազգային բաժանման բարձրագույն աստիճանը միջազգային տնտեսական միասնացումն է (ինտեգրացիան):
 4. Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքում ամենաերիտասարդ ոլորտը արդյունաբերությունն է:
 5. Ազգային տնտեսություն է կոչվում յուրաքանչյուր երկրում պատմականորեն ձևավորված հասարակական վերարտադրության համակարգը:
 6. Համաշխարհային տնտեսության «ավանգարդային եռյակի» ճյուղերն են՝ մեքենաշինությունը, էլեկտրաէներգետիկան և միկրոկենսաբանությունը:
3. Հարավարևելյան Ասիայի երկրների ընկերակցության (ԱՄԵԱՆ) կազմի մեջ մտնում է 10 երկիր: Դրանցից են՝ Ինդոնեզիան, Թաիլանդը: Թվարկե՛լ մնացած 8 երկրները-----2 միավոր
4. Թվարկե՛լ ռեկրեացիոն ռեսուրսների չորս գլխավոր տեսակները (առանց մեկնաբանության)-----1 միավոր
5. Տրանսպորտային համակարգի մեջ ո՞ր 3 բաղադրիչներն են մտնում: Թվարկե՛լ տրանսպորտային ցանցի կոնֆիգուրացիայի տիպերը:-----2 միավոր
6. Որո՞նք են ջրի հիմնական հատկանիշները (թվարկե՛լ առանց մեկնաբանության)-----2 միավոր
7. Մասնագետներն արդի աշխարհը բաժանում են քաղաքակրթական 12 խոշոր տարածաշրջանի: Թվարկե՛լ դրանք առանց մեկնաբանելու-----3 միավոր

8. Գետի լայնությունը 4 մ է, միջին խորությունը՝ 50 սմ, ջրի արագությունը՝ 0,3 մ/վրկ (պատասխանները հիմնավորել հաշվարկներով)-----2 միավոր
1. Որոշել գետի ծախսը
 2. Որոշել գետի հոսքը 1 ժամում:
9. Որքա՞ն է 80 000 կվտ/ժ էլեկտրաէներգիա արտադրելու համար պահանջվող քարածխի քանակը տոննայով : (Պատասխանը հիմնավորել հաշվարկով)-----1 միավոր
10. Որոշել ցորենի ցանքատարածությունների մակերեսը (հեկտար), եթե համախառն բերքը 24 հազ. տոննա է, իսկ միջին բերքատվությունը՝ 40 ց/հա (պատասխանը հիմնավորել հաշվարկով):-----1 միավոր
11. Ի՞նչ է սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ)-----1 միավոր
12. Միջազգային տնտեսական հարաբերությունների ձևերից թվարկել 8-ը-----2 միավոր

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան